ԱՐԹՈՒՐ ԱԶԱՐՅԱՆ
ARTUR AZARYAN

ԹԵՈԴՈՐ ՀԵՐՑԵԼԸ ԵՎ ՀԱՅ-ՀՐԵԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

Սիոնիստական «համաշխարհային քաղաքականությունը» ուներ երկու կարևորագույն բաղկացուցիչ մաս՝ այսպես կոչված, արևելյան կողմնորոշման քաղաքականություն, որն ուղղված էր Թուրքիայի համակրանքի գրավմանը, և արևմտյան կողմնորոշման քաղաքականություն, որը կոչված էր՝ շահագրգռելու եվրոպական մեծ տերություններին հրեական պետության ստեղծման գործում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արևելքի հրեաները պահպանում էին ազգային գաղափարը, իսկ Արևմուտքի հրեաների մոտ կենտրոնացած էր հարստությունն ու միջոցները, Հերցլը գրում էր. «Արևելքն ու Արևմուտքը պետք է միավորվեն, մենք պետք է վերցնենք գաղափարը Արևելքից և իրականացնենք այն Արևմուտքի միջոցներով»[1]:

Օգտագործելով «Արևմուտքի մեթոդներն ու գենքերը»՝ դիվանագիտական, քաղաքական և գաղափարախոսական «աշխարհները» պետք է իրավաբանորեն ձևակերպեին ազգային պետության հիմնումը կամ ստեղծեին իրավական հիմք նման բան ձեռնարկելու համար: «Սիոնիցմի Դիվանագիտություն» մասին Հերցլի տեսությունը դարձավ սիոնիստական «համաշխարհային քաղաքականության» անբաժան մասը, որը նախատեսում էր, որ հրեական համայնքի տարբեր աշխարհներ կարող են գործել իրենց հայեցողությամբ, տարբեր անվանումներով և հաճախ միմյանց հակառակ նշանաբաններով: Նրանց աշխատանքին չխոչընդոտելու համար, սիոնիզմը թույլ էր տալիս սփյուռքի հրեաներին խոսել ցանկացած լեզվով, անվանել իրենց ցանկացած ազգության ներկայացուցիչ, լինել ցանկացած քաղաքական կուսակցության անդամ, դավանել ցանկացած կրոն, և այս բոլորը մեկ պայմանով՝ պահպանել հավատարմություն սիոնիզմի գաղափարներին և Հին կտակարանին:

Արևմտաեվրոպական սիոնիստները Թեոդոր Հերցլի գլխավորությամբ սկզբնապես ոգևորված էին միայն էքստարածքայնության գաղափարով և «չերտերի» ձեռքբերմամբ, մինչդեռ ռուս սիոնիստները՝ ի դեմս Ուսիշկինի, Չլենովի և այլոց, առաջնային պլան էին մղում գաղափարախո-

[1] Desmon Stewart, "Theodor Herzl", New York, 1974, p. 168:

տությունը և մերժում էին Պաղեստինից բացի ցանկացած այլ տարածքի մասին զաղափար: Երբ առաջինները հետ կանգնեցին հրեական պետության ստեղծման գաղափարից ԱՄՆ-ի, Լատինական Ամերիկայի կամ Աֆրիկայի տարածքում և համաձայնվեցին Ռուսաստանի սիոնիստների դիրքորոշման հետ, թուրքամետ քաղաքականությունը դարձավ բոլոր սիոնիստների պաշտոնական քաղաքականությունը: Պաղեստինում հրեական պետության ստեղծման ճանապարհին ընկած էին բազմաթիվ դժվարություններ: Նախ անհրաժեշտ էր զաղութայնացնել այն տարածքը, որտեղ բնակվում էին արաբները, և որտեղ հրեական տարրը կազմում էր չնչին տոկոս: Երկրորդ, Պաղեստինը գտնվում էր Թուրքիայի գերիշխանության տակ, և առանց նրա համաձայնության, հնարավոր չէր ոչ զաղութայնացումը, ոչ էլ այնտեղ ազգային օջախի ստեղծումը: Եվ երրորդ, միջազգային հասարակական կարծիքը, սիոնիստական առաջնորդների խոսքերով, անբարենպաստ էր, քանզի հրեաները Եվրոպայում չէին վայելում այն համակրանքը, ինչ հույները: Հասկանալի է, որ ամենից առաջ անհրաժեշտ էր ստանալ Բ. Դռան, թեկուզ բանավոր համաձայնությունը հրեաների՝ Պաղեստին մուտք գործելու համար: «Սիոնիցմի Դիվանագիտություն» հիմնադիր և առաջին «դիվանագետ» Թեոդոր Հերցլը դեռ մինչև Բազելի կոնգրեսը ստանձնում է այդ խնդրի լուծումը:

Հերցլը, լավատեղյակ լինելով հայոց պատմությունից, համոզված էր, որ հայ ազգային-ազատագրական շարժման առաջնորդները սխալվում են ինչպես տեսական, այնպես էլ ռազմավարության ու մարտավարության հարցերում: Իր տեսությունը, ռազմավարությունն ու մարտավարությունը նա կառուցեց ուղիղ հակառակ այն բանի, որոնց հետևում էին հայերը: Եթե հայերը պահանջում էին միայն Արևմտյան Հայաստանի ինքնավարություն թուրքական պետականության շրջանակներում, ապա Հերցլը առաջ էր քաշում հարցի արմատական որոշում. ձեռք բերել տարածք հրեական պետության կազմակերպման համար միջազգային-իրավական ուղղվածությամբ, որտեղ թուրքական սուլթանը կկորցներ իր իշխանությունը այդ հողերի վրա: Եվ միայն դրանից հետո հրավիրել հրեաներին զանգվածային բնակեցման Պաղեստինում: Հերցլը ուղղակիորեն հայտարարում էր, որ չի ցանկանում ստեղծել «նոր Հայաստան հրեաների համար»[2]: Հայաստանը Թուրքիայի զաղութն էր, իսկ հայերը չէին հանդիսանում միջազգային իրավունքի սուբյեկտ, ինքնիշխանությամբ օգտվում էր իշխող ազգը՝ ի դեմս իր ղեկավարների: Եվ եթե հայերը ցանկանում էին հասնել իրենց նպատա-

---

[2] Տես՝ Yair Auron, "The Banality of Indeference: Zionism and the Armenian Genocide", New Brunswick, 2000, p. 151:

կին մեծ տերությունների օժանդակությամբ և միջամտությամբ, ապա Հերցլը վճռականորեն մերժում էր նմանատիպ մարտավարական մեթոդները և փորձում էր հասնել իր ռազմավարական նպատակին բացառապես սուլթանի կամավոր համաձայնությունը ստանալու ճանապարհով: Դրա համար սուլթանին անհրաժեշտ էր համոզել, որ հրեական «մեծ աշխարհը» իրեն կվճարի ոչ քիչ, քան գիջված տարածքի գինն է:

Միջազգային իրավունքի այս հասարակ ուռանձնահատկությունը այդպես էլ չգիտակցվեց հայ գործիչների կողմից: Բեռլինի կոնգրեսի որոշումը ընկալվեց որպես փրկություն: Իրականում դա ևս մեկ արգելք էր հայ ժողովրդի համար, որի բանալին գտնվում էր միայն թուրքական ղեկավարների ձեռքերում: Շրջանը սեղմվել էր, և չկար ելքի ճանապարհ: Իրադրությունը չփոխվեց նույնիսկ այն ժամանակ, երբ քաղաքական թատերաբեմում հայտնվեցին կուսակցությունները: Դրանց ղեկավարները գտնում էին, որ մեծ տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Ավստրիան, Ռուսաստանը, կստիպեն Բ. Դռանը հարգել իր կողմից ստանձնած պարտավորությունները: Սակայն մեծ տերությունները երբեք չէին ցուցաբերում միասնականություն Հայկական հարցի կապակցությամբ, ինչը տեղի էր ունենում նաև բալկանյան ժողովուրդների հետ կապված հարցում: Այն դարձավ կովախնձոր, հատկապես Անգլիայի և Ռուսաստանի միջև: Բ. Դուռը հրաշալիորեն օգտագործեց այդ տարաձայնությունները, իսկ հայերը շարունակում էին պնդել միջազգային համաձայնագրով սահմանված իրենց իրավունքների մասին:

Սիոնիզմի առաջնորդները չէին ցանկանում, որպեսզի իրենց ազգի հետ կատարվի նույնը: Հերցլը տեղյակ էր Արևմուտքի դիվանագիտության խոհանոցի բոլոր առանձնահատկություններին ու առավելություններին, Արևելքի թուլություններին ու հնարավորություններին: Նա հավատում էր, որ օգտագործելով այս երկու ուժերը, նա կարող է հասնել հրեաների համար Պաղեստինում անկախ պետության ստեղծմանը:

Ինչպես արձագանքեց թուրքական տիրակալը Թեոդոր Հերցլի ծրագրին: Աբդուլ Համիդը վճռականորեն մերժեց այն: Նա հայտարարեց. «Ես չեմ կարող վաճառել նույնիսկ մի փոքրիկ հողակտոր, քանի որ այն պատկանում է ոչ թե ինձ, այլ իմ ժողովրդին... Թող հրեաները իրենց պահեն իրենց միլիարդները: Երբ իմ կայսրությունը կրաժանվի մասերի, նրանք կստանան Պաղեստինը անվճար...»[3]: Չնայած Օսմանյան կայսրության տիրակալի նմանատիպ բազմաթիվ հայտարարություններին, Հերցլը

---

[3] "The complete Diaries of Theodor Herzl", edited by R. Patai, New York: Herzl Press, 1960, vol. 1, p. 378.

հուսախաբ չէր լինում և շարունակում էր մնալ այն կարծիքին, որ հայերը վարում են ոչ ազգային պայքար, իսկ ինքը կվարի միայն հրեական քաղաքականություն: Բեռլինի կոնգրեսի որոշումը Հերցլը համարում էր ծուղակ հայերի համար: Ֆինանսական հարցերով հայտնի հրեա փորձագետ և Ռոթշիլդի գրասենյակի ղեկավար Մեյերը գրում էր իր ընկերոջը՝ Հերցլին, որ «անհույս է համարում հայերի գործունեությունը»: Թերևս նման կարծիքի էր նաև ինքը՝ Բիսմարկը, ով համարում էր 61-րդ հողվածը «երկու ծայրով փայտ»[4]: Մի ծայրը գտնվում էր Բեռլինի, Լոնդոնի, Պետերբուրգի, Վիեննայի, Փարիզի ձեռքերում, որի օգնությամբ նրանք ճնշում էին իրագործում Թուրքիայի վրա սեփական շահերի համար: Երկրորդ ծայրը գտնվում էր թուրքական սուլթանի ձեռքերում: Այդ փայտով նա պարբերաբար և ծրագրավորված ոչնչացնում էր հայկական բնակչությունը:

1896 թվականի մայիսի 15-ին Հերցլը Վիեննայից նամակ ուղարկեց Լոնդոն՝ լեհական, թուրքական և սիոնիստական գործակալ Նելիսկիին, և տեղեկացրեց նրան, որ կապեր են հաստատվում հայ առաջնորդների հետ Թիֆլիսում և Լոնդոնում: Նա նաև հետևյալ խորհուրդը տվեց. «Դուք ստիպված կլինեք հաղթահարել հայերի անվստահությունը: Նրանց առաջնորդները համոզված կլինեն, որ մենք ցանկանում ենք խաղարկել նրանց՝ ենթակա լինելու հանգամանքը, ինչը վնաս կհասցնի ամբողջ շարժմանը: Իրականում, հիմնվելով երեկ գիշերը ստացած իմ տեղեկատվության վրա, մենք կարող էինք նրանցից հասնել հաշտության առանց որևէ վնասակար արդյունքների»[5]:

Մալթրոնը շարունակում էր պնդել, որ մի օր հարմար առիթի դեպքում, Բ. Դուրը «նորից կփորձի վարել հին խաղը»: Ապա վերջաբանի փոխարեն նա ավելացնում է. «Գործերի ներկա դասավորվածության դեպքում կա հնարավորություն, որ հարջորդ 30 կամ 40 հազար հայերին զոհաբերելու արդյունքում հրեաներին կշնորհվի փոքր տարածք Սիրիայում իրենց բնակավայրերը ստեղծելու համար, սակայն եթե նրանք ցանկանում են իրականացնել իրենց օրինական ձգտումը և ստեղծել իրական հրեական պետություն՝ ինքնավար Պաղեստին, ապա ըստ իս՝ ոչինչ այնքան չի արագացնի դա, որքան ինքնավար Հայաստանի ստեղծումը»[6]:

Չնայած բրիտանական մամուլի հրապարակումները որոշակի հաջողություններ արձանագրում էին, այնուամենայնիվ, լորդ Սոլսբերիին հայկական առաքելության մեջ ներգրավելու վճռական քաղաքական նպատակը մտնում էր փակուղի: Երբ մայիսի 26-ին Նելիսկին հեռագրեց այն

---

[4] Տես՝ Edmond Taylor, "The Fossil Monarchies", London, 1967, p. 156:

[5] Herzl, "Letters", vol 1, 15 May 1896, p. 103.

[6] Նույն տեղում:

մասին, որ Սոլսբերին հրաժարվել է հանդիպել իր հետ, Հերցլը խորհուրդ տվեց նրան արագ վերադառնալ Վիեննա և հետաձգել բրիտանացի պետական գործչի հետ կապված նախաձեռնությունը մինչև հունիսի վերջ, երբ սիոնիստական շարժման առաջնորդը անձամբ կմեկնի Լոնդոն: Փոխարենը Հերցլը առաջարկեց կազմակերպել անհապաղ այց Կոստանդնուպոլիս, որտեղ Նելինսկին կներկայացներ իրեն Աբդուլ Համիդին: «Թող սուլթանը մեզ տա այդ հողակտորը, իսկ մենք դրա դիմաց կարգի կհրավիրենք նրա տունը, կշտկենք ֆինանսական իրավիճակը ու դեպի նա կփորձենք կողմնորոշել հասարակական կարծիքը ամբողջ աշխարհում»[7]:

Թեոդոր Հերցլը երեք ամիս շարունակ փորձում էր հանդիպել Եվրոպայում հայկական հեղափոխական կոմիտեների հետ, սակայն նա այդ գործում մեծ հաջողություն չունեցավ: Մասնավորապես, անարդյունք եղավ նրա հանդիպումը «Հնչակյան» կուսակցության առաջնորդ Նազարբեկյանի հետ: Այդ հանդիպումը Հերցլի խնդրանքով կազմակերպել էր Ռապոպորտ անունով մի լրագրող, որը մինչ այդ՝ հարցազրույց վերցնելիս, տեղեկացրել էր Հերցլին, թե տպավորություն ունի, որ հայկական հեղափոխականներին ֆինանսական օգնություն է ցուցաբերում անգլիական կառավարությունը: Հերցլի հիմնական նպատակն էր բացատրել Նազարբեկյանին, որ հայերին անհրաժեշտ է խաղաղություն հաստատել սուլթանի հետ, հաշվի չառնելով նրանց վերջին այն հայտարարությունները, թե Թուրքիան պետք է բաժանվի մասերի: Իր հուշերում Հերցլը բավական տհաճ է արտահայտվում թե Նազարբեկյանի տան, թե այդ տանը գտնվող հայերի մասին, անվանելով նրանց միջին զարգացվածության և երբեմն էլ վայրի: Ըստ Հերցլի, խոսակցության ընթացքում պարզ է դարձել, որ Նազարբեկյանը չի վստահում սուլթանին, և մինչ նրան ենթարկվելը, որոշակի երաշխիքներ էր պահանջում: Հերցլը նշում է, որ նրա քաղաքական մտքերը կանոնակարգված չէին, նրա ընկալումը Եվրոպայում գործերի իրադրության վերաբերյալ, բացարձակապես մանկական էր: Որպես օրինակ, նշվում է այն, որ Նազարբեկյանն ասել է. «Ավստրիան ամրություններ է կառուցում Սև ծովում»: Այս արտահայտությունը բավական մանկամիտ էր թվացել Հերցլին: «Ինչպես երևում է, նրա խոսքին են ենթարկվում աղքատ մարդիկ Հայաստանում, որոնց ենթարկում են կոտորածի, իսկ ինքը ապրում է Լոնդոնում առանց որևէ էական հարմարությունների»: Իսկ Հերցլի այն հարցին, թե ով վերջին հաշվով օգուտ կստանա այս ամենից՝ Ռուսաստանը, թե Անգլիան, Նազարբեկյանը

---

[7] "The Complete Diaries of Theodor Herzl", edited by R. Patai, New York: Herzl Press, 1960. vol., 1, p. 349-356, 363:

պատասխանել է, որ իրեն չի հետաքրքրում, քանզի ինքը պայքարում է միայն թուրքերի դեմ[8]:

1896 թվականի հուլիսի 15-ին Թեոդոր Հերցլը Վիեննայից ուղևորվեց Սոֆիա, այնուհետև Կոստանդնուպոլիս: Նա բավական մանրամասն պատրաստվել էր Օսմանյան կայսրության տիրակալի հետ հանդիպման: Այս գործում նրան մեծ օգնություն էր ցուցաբերում պրոֆեսոր Հերման Վամբրին[9]:

Վերջինիս կյանքը մեծապես կապված էր Թուրքիայի հետ: Ինչպես պատմում է ինքը՝ Վամբրին, լինելով երիտասարդ, Եվրոպայից գալիս է Կոստանդնուպոլիս արևելյան լեզուներ սովորելու նպատակով: Շուտով նրա առջև ճանապարհ է բացվում դեպի թուրքական բարձրաստիճան պաշտոնյաներ: Տարբեր նախարարների մոտ դառնալով ուսուցիչ և քարտուղար, նրան հաջողվում է մուտք գործել արքայական պալատ՝ որպես ֆրանսերենի ուսուցիչ արքայադուստր Ֆաթիմայի համար: Այնուհետև նա ծանոթանում է նաև նրա եղբոր՝ Համիդ էֆենդիի հետ:

Անցնում են տարիներ: Վամբրին շրջում է մահմեդական Արևելքի բոլոր երկրներով և վերադառնալով Եվրոպա, տեղեկանում է, որ իր վաղեմի ծանոթ արքայազնը գահ է բարձրացել: Բնականաբար, այս հանգամանքը դրդում է պրոֆեսորին վերականգնել հին ծանոթությունը: Նա ուղևորվում է Կոստանդնուպոլիս, որտեղ ընդունվում է մեծ բարեկամական հյուրասիրությամբ և կարճ ժամանակով դառնում է սուլթանի մտերիմներից մեկը:

Սուլթանի հետ նրա հարաբերությունների մասին տեղեկանում են նաև Եվրոպայում: Մի անգամ Բուդապեշտում նրան է այցելում Հերցլը և խնդրում, որ նա իր համար ընդունելություն կազմակերպի սուլթանի մոտ, «քանի որ ցանկանում էր սուլթանի հետ խոսել սիոնիզմի մասին»: Վամբրին, բնականաբար, հաճույքով խոստանում է օգնել, որովհետև «լինելով հրեա ի ծնե և դաստիարակությամբ, միշտ ակտիվ հետաքրքրություն էր ցուցաբերում եղբայրների ճակատագրի հարցում»[10]:

Վամբրին մեծ ջանասիրությամբ նվիրվում է այս գործին: Նա նամակ է գրում պալատ՝ իր ընկերոջը, ինչպես նաև անձամբ ժամանում է Կոստանդնուպոլիս այդ նպատակով: Հերցլի հետ հանդիպումները դառնում են առավել հաճախ: Միասին քննարկում էին «Հերցլի և սուլթանի միջև նախատեսվող հանդիպման մանրամասները», ինչպես նաև «պալատում

---

[8] Տես՝ "The Complete Diaries of Theodor Herzl", edited by R. Patai, New York : Herzl Press, 1960, vol., 2, p. 417;

[9] Տես՝ "The Complete Diaries of Theodor Herzl", edited by R. Patai, New York : Herzl Press, 1960, vol., 2, p. 419;

[10] Теодор Герцль, указ соч., с. 47;

ազդեցություն ձեռք բերելու» հարցը: «Իմ առաքելությունը,- պատմում է Վամբրին,- պատկանում էր դժվարագույնների շարքին, որ երբեք անհրաժեշտ է եղել կատարել: Նախ և առաջ դրա պատճառ էր հանդիսանում սուլթանի անվստահությունը, ով վախենում էր սիոնիստներից, նրանց նպատակների մեջ տեսնելով հարձակում Պաղեստինի վրա, և ապա նաև սուլթանի անորոշությունը բոլոր հարցերում: Ինձանից մեծ ջանքեր պահանջվեցին նրա կասկածները ցրելու համար»[11]:

Հերցլը ծրագրել էր այս գործում ներդնել 20 միլիոն ֆունտ, որից 2 միլիոնը պետք է միանգամից տրամադրվեր թուրքական կառավարությանը՝ որպես կանխավճար Պաղեստինը զիջելու դիմաց, իսկ մնացած 18 միլիոնը պետք է ազատեր թուրքական կառավարությանը արտաքին պարտքերից:

Սուլթանի հետ միասին դժվարություններ էր ստեղծում նաև արքունիքը, քանի որ նրա անդամները մտածում էին՝ եթե հրեաները ցանկանում են ստանալ կոնցեսիա, ապա ոսկին պետք է անձրևի պես թափվի, և հետևաբար, նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր ստանալ մի քանի կաթիլ այդ անձրևից:

Սուլթանի սկզբնական կասկածները և ցանկություն չունենալը՝ հանդիպելու «Հրեական պետության» հեղինակի հետ, բացատրվում են ոչ այնքան նրանով, որ Աբդուլ Համիդը վախենում էր սիոնիստներից, որքան, որ սուլթանը չափազանց դժգոհ էր վիեննական այն թերթից, որտեղ աշխատում էր Հերցլը:

Վերջապես, Վամբրին ստանում է սուլթան Աբդուլ Համիդի վերջնական որոշումը, ըստ որի նա պատրաստ էր ընդունել Հերցլին, բայց պայմանով, որ Վամբրին պետք է մեկնի: Հերցլին և Վամբրիին արգելվում էր միաժամանակ գտնվել Կոստանդնուպոլիսում:

Սուլթանը, իրոք, ընդունեց Հերցլին, ընդ որում «արտակարգ բարեկամությամբ», իսկ վերջինս էլ «հիանալի տպավորություն» թողեց թուրքական տիրակալի վրա: Հերցլի պատվին կազմակերպվեց «հանդիսավոր առաջին ընդունելություն, որպես հրեական ժողովրդի չթագադրված ղեկավարի»: Կոստանդնուպոլսում Հերցլը ծանոթացավ Թուրքիայի քաղաքական իրավիճակի հետ և նրա վերաբերմունքին Պաղեստինում հրեական հարցի ճիշտ զարգացման ապահովման հնարավոր բաց քննարկմանը:

Սուլթանի հետ հանդիպումից հետո Հերցլը, թերևս, միակ դրական առաջխաղացումը կարող էր համարել այն, որ Նելինսկու աջակցությամբ սուլթանի կողմից պարգևատրվեց «Մեջիդիե» շքանշանով: Հերցլը կարող էր

---

[11] Նույն տեղում:

օգտագործել այդ շքանշանը՝ որպես սուլթանի հետ բարեկամական հարաբերությունների և բանակցությունների դրական արդյունքի հավաստիք ու գրավական:

Մեկ տարի անց Հերցլը կրկին հայտնվեց թուրքական մայրաքաղաքում, որտեղ շարունակում էր բանակցությունները սուլթանի հետ:

Ինչպես և առաջին այցի ժամանակ, նա հավատացնում էր Աբդուլ Համիդին, որ Պաղեստինում հրեական պետությունը, եթե այդպիսին ստեղծվի, լավագույնս կպաշտպանի Թուրքիայի շահերը և կդառնա նրա պահապանը տարածաշրջանում: Հերցլը այս կերպ հարվածում էր «հիվանդ մարդու» ամենացավոտ տեղին: Նա լաքջ գիտակցում էր, որ Թուրքիան մշտապես գտնվում է վախի ազդեցության տակ, ինչը սկսվել էր դեռ Եգիպտոսի տիրակալ Մուհամեդ Ալիից, ում բանակը 19-րդ դարի առաջին կեսերին, ոչնչացնելով թուրքական զորքերին, գրավել էր Պաղեստինը, Սիրիան, Լիբանանը և սպառնում էր մայրաքաղաքին: Այդ ժամանակ Թուրքիան փրկվեց միայն Անգլիայի և Ռուսաստանի միջամտությունից հետո: Այդ պահից ի վեր, արաբների ազգային ազատագրական պայքարը կրում է առավել լայնածավալ մասշտաբներ: Աբդուլ Համիդը վախենում էր, որ արաբական երկրները բալկանյան ժողովուրդների նման չառանձնանան կայսրությունից և որպեսզի դա տեղի չունենար, Հերցլը առաջարկում էր իր ծառայությունները:

Հերցլը իր երկհատոր հուշերում նշում է. «Թուրքական կառավարությունը պահանջեց մեզանից վճարել 40 միլիոն ֆրանկ: Դրա դիմաց կառավարությունը խոստացավ մեզ տրամադրել կոնցեսիա երկաթուղու կառուցման համար Պարսից ծոցից մինչև Միջերկրական ծով, ինչպես նաև մեզ հնարավորություն տալ հիմնել գաղութներ Պաղեստինում՝ 70 հազար քառակուսի կիլոմետր տարածքի վրա»[12]: Նշենք, որ այս տարածքը գրեթե երեք անգամ գերազանցում էր Անգլիայի ենթամանդատային տարածքը Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Մակայն այստեղ բացակայում էր այն, ինչին ձգտում էր Հերցլը՝ միջազգային իրավական երաշխիքները:

Այսպիսով, Թուրքիայի նկատմամբ վերաբերմունքը դարձավ հարցերի հարցը սիոնիստների համար, «լինել, թե չլինել»: Այդ հարցի լուծման փորձից էլ սկսեց իր դիվանագիտական գործունեությունը Հերցլը: Այդ հարցն էր գլխավորը Հերցլի և բարոն Ռոթշիլդի հետևորդների միջև առկա վեճերում:

---

[12] "The Complete Diaries of Theodor Herzl", edited by R. Patai, New York: Herzl Press, 1960, vol., 2, p. 711:

The Zionist "world policy" had two major components: the so-called policy of Eastern orientation which was aimed at attracting the sympathy of Turkey and policy of Western orientation which tried to interest the Great European Powers in the establishment of a Jewish state. Considering the fact that the Jews of East kept the national idea, and the wealth and resources were concentrated at the Jews of West, Herzl wrote, "East and West must unite, we must take an idea of East and implement it at the expense of means of West."

Using "the methods and weapons of West" the diplomatic, political and ideological "worlds" had to formalize the base of the national state legally or to create a legal basis for doing this.

Herzl, being well-versed in Armenian history, was sure that the leaders of national-liberation movement are wrong in both theoretical and strategic and tactical issues. His theory, tactics and strategy were contrary to those followed by the Armenians.

If the Armenians only demanded independence in Western Armenia within the bounds of the Turkish state, then Herzl demanded a radical solution – to get a territory for the organization of the Jewish state of international legal orientation where the Sultan of Turkey would lose his power. And only then - to invite Jews to mass settlement in Palestine. Herzl declared bluntly that he didn't want to create "new Armenia for the Jews."

Thus, the attitude towards Turkey has become a problem of problems for the Zionists – " to be or not to be." Herzl began his diplomatic activity with the attempt to resolve this issue.